Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9.4 ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝ բազային տուրքի 50-ապատիկի չափով:

Նկատի ունենալով, որ հայցվորը հայցադիմում ներկայացնելիս վճարել է պետական տուրքի գումարը, իսկ հայցն ենթակա է բավարարման, ուստի Դատարանը գտնում է, որ պատասխանող «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունից հօգուտ հայցվոր «Քինգ Մարշալ» ՍՊ ընկերության ենթակա է բռնագանձման 50.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Քինգ Մարշալ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության՝ «ՀՀՀ-ՀՄԱԾՁԲ-22/3» ծածկագրով, հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգի շրջանակներում նախաձեռնած գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Քինգ Մարշալ» ՍՊ ընկերությանը ներառելու վերաբերյալ 10.11.2022 թվականի որոշումը:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունից հօգուտ «Քինգ Մարշալ» ՍՊ ընկերության բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Հ. ՋԱԼԱԼՅԱՆ**

Ծանոթություն: Սույն վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, և վճիռը մտել է օրինական ուժի մեջ _____ 2023 թվականին:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Հ. ՋԱԼԱԼՅԱՆ**